«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

02.02.15թ N: Սհո/1-03/130

ՀՐԱՎԵՐ

Ձեր N: ____________________

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սերվերների ծրագրային տարեկան սպասարկման ծառայությունների ձեռքբերման
N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ թվով 14 սերվերների ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերումը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով, մինչև *2015թ. Փետրվարի* 13- ը *ժամը՝ 12:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Հայկ Հովհաննիսյանը:* Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեում, 2015թ. *Փետրվարի* 13 *-ին, ժամը՝ 12:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*-ի կարիքների համար «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ թվով 14 սերվերների ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերումը.:

"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի կարիքների համար «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ թվով 14 սերվերների ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերումը (որը կազմված է **1** չափաբաժնից) *և* տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N6)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N7)*:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N « ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»
ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am: Հեռ՝ (055) 55-78-35:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*

Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրեն՝ *Ա. Մարտիրոսյան*

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8ա
Head Office
8A Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia
1-71
info@armwater.am

ՆԱԽԱԳԻԾ

«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05» ծածկագրով
ՇՀ ընթացակարգի հրավերի

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կարիքների համար սերվերների ծրագրային տարեկան սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագիր

N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»

ք. Երևան «___» _____ 2015 թ.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն ***Պ. Լորենի***, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ----------ն (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ թվով 14 սերվերների ծրագրային սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը յուրաքանչյուր ամիս Ծառայության մատուցման ավարտից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է ՏՏ բաժնի աշխատակիցների կողմից:

3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Պատվիրատուի կողմից արձանագրությունն ընդունում է ՏՏ

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված

գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Սույն պայմանագիրը ստորագրելուհետ միասին Կատարողը պարտավորվում է լրացնել և հաստատել սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված տուժանքի մասին համաձայնությունը:

5.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակ.8	
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ	
ՀՎՀՀ՝ 02509667	
Հ/Հ՝ 16048505442500	
Գլխավոր տնօրեն՝ Պ.Լորեն	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«___» _____ 2015 թ. կնքված
N *«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»*
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր			
	Անվանում	Սպասարկվող համակարգ	Նկարագիրը
1	Server HYP1	Windows Server 2012	Physical
2	Server HYP2	Windows Server 2012	Physical
3	Server Domain Controller1	Windows Server 2012	Virtual
4	Server Domain Controller2	Windows Server 2012	Virtual
5	Remote Desktop Server1	Windows Server 2012	Virtual
6	Remote Desktop Server2	Windows Server 2012	Virtual
7	Remote Desktop Server3	Windows Server 2012	Virtual
8	Windows Update Server	Windows Server 2012	Virtual
9	System Center Server	Windows Server 2012/ System Center 2012 Configuration Manager	Physical
10	SQL server	Windows Server 2008 R2 / SQL Server 2008 R2	Physical
11	Backup Server	Windows Server 2008 R2/ DPM System Center 2012	Physical
12	WEB Server	Windows Server 2008 R2	Physical
13	Proxy Server	Linux/ Kerio Control 8.4.2	Physical
14	Mail Server	Windows Server 2008 R2/ Mdaemon Mail Server	Virtual

Կատարվող աշխատանքների տեխնիկական բնութագրեր
Servers/Systems Management and Support Description

1. System/Servers Administration / Համակարգի/Սերվերների Կառավարում

1.1 Install new servers (upgrade existing) and configure hardware, peripherals, services, settings, directories, storage, etc. in accordance with standards and project/operational requirements.
Նոր Սերվերների ծրագրային ապահովման տեղադրում (տեղադրվածների թարմացում) և սարքավորումների, օժանդակ ցանցային միջոցների , սերվիսների, կարգաբերումների, կրիչների և այլն կարգավորումներ համաձայն ստանդարտների և ծրագրային գործառնական պահանջների:
1.2 Develop and maintain installation and configuration procedures.
Տեղադրման և կարգավորման ընթացակարգերի մշակում և պահպանում:
1.3 Configure/upgrade Storage Systems based on company requirements.
Կրիչների համակարգերի կարգավորում և թարմացում համաձայն

ընկերության պահանջների:

2. **Operations and Support** Գործառնություն և աջակցություն

2.1 Perform daily system monitoring, verifying the integrity and availability of all hardware, server resources, systems and key processes, reviewing system and application logs, and verifying completion of scheduled jobs such as backups.
Համակարգի օրական մոնիտորինգ, բոլոր սարքավորումների , սերվերային ռեսուրսների, համակարգերի և կարևորագույն պրոցեսների համապատասխանության և հասանելիության ստուգում, համակարգի և ծրագրերի գրանցումների ստուգում, ինչպես նաև պլանավորված աշխատանքների (օրինակ՝ արխիվացման) կատարման ստուգում:
2.2 Perform regular security monitoring to identify any possible intrusions.
Անվտանգության կանոնավոր մոնիտորինգ՝ ցանկացած հնարավոր ներխուժումները հայտնաբերելու նպատակով
2.3 Create, change, and delete user accounts per request.
Օգտատերերի ստեղծում, փոփոխում և հեռացում՝ ըստ պահանջի:
2.4 Repair and recover systems from hardware or software failures.
Համակարգերի Ծրագրային վերականգնում՝ սարքավորումների կամ ծրագրերի խափանման դեպքում:

3. **Maintenance** Սպասարկում

3.1 Apply OS patches and upgrades on a regular basis, and upgrade administrative tools and utilities. Configure / add new services as necessary.
Օպերացիոն համակարգի լրացումների և թարմացումների կանոնավոր կիրառում և վարչական գործիքների թարմացում: Նոր սերվիսների կարգավորում և ավելացում՝ ըստ անհրաժեշտության
3.2 Maintain operational, configuration, or other procedures.
Գործառնական, կարգավորման և այլ ընթացակարգերի պահպանում
3.3 Perform ongoing performance tuning, hardware upgrades, and resource optimization as required.
Համակարգի աշխատանքի ընթացիկ կարգավորում, սարքավորումների թարմացում, ռեսուրսների օպտիմալացում՝ ըստ պահանջի

Systems List/ Ցանկ

1. High Available two node Hyper-V Cluster on Windows Server 2012
2. Domain Controllers (Primary, Secondary)
3. Failover DHCP Servers
4. Two DNS Servers
5. Kerio Control Firewall
6. System Center Configuration Manager 2012 R2
7. System Center Data Protection Manager 2012 R2
8. Antivirus Server (Forefront Endpoint Protection)
9. Windows Update Server (WSUS)
10. File and Print Servers
11. Remote Desktop Servers (3-4)
12. 1C Server (Windows server 2008 R2 , MS SQL Server 2008R2)
13. Mail Server (Mdaemon)

14. Web Server 2008R2 (Apache, Mysql)
15. Three application Servers(Mobitowebe, Commercial Software, Call Center Software, Web App)

Servers/Devices List/ Ցանկ

1. HP Proliant DL360P GEN8 (Windows Server 2012 Installed_
   1.1 AW-DC01
   1.2 AW-RDS01 Windows Server 2012 (50 Users)
   1.3 AW-RDS03 Windows Server 2012 (70 Users)
   1.4 AW-WSUS Windws Server 2012 (330 Users)
2. HP Proliant DL360P GEN8 (Windows Server 2012 Installed_
   2.1 AW-DC02
   2.2 AW-SCCM01 Wndows Server 2012 (300 Users)
   2.3 AW-RDS04 Windows Server 2012 (100 Users)
   2.4 AW-Headoffice.Mail Windows 7 (MDaemon)
3. HP Storage P2000
4. HP Switch 2620-48 (manageable)
5. One SuperMicro X8DTL (SQL Server) Windows Server 2008 R2 Installed_
6. HP ProLiant ML 350 G6 (Data Protection Manager) Windows Server 2008 R2
7. HP ProLiant ML110 G2 (Web Server) Windows Server 2008 R2
8. HP ProLiant ML 310e V2 (Mobitowebe) Windows Server 2012
9. One SuperMicro X9SCL/X9SCM (Scada Software) Windows Server 2008 R2
10. Gigabyte Technologies Intel Core I7, Raid, HDD 500, 8 Ram Kerio Control Linux (200 Users)

Required Qualifications:/ Որակավորման չափանիշներ

- Strong working knowledge of virtualization technologies products (Hyper-V, ESXi)
- Strong knowledge of network infrastructure operations;
- Experience with high availability systems and storage solutions
- Strong knowledge of AD, DHCP, DNS, RDS, FPS, IIS;
- Strong knowledge and working experience to work HP Storage systems and Servers
- At least 5-year experience with Windows Servers Systems (2008R2, 2012)
- SQL Server 2008R2/2012 Administration skills
- Strong knowledge and working experience with System Center 2012 R2 Products (SCCM, DPM, and SCOM)
- MSCA Certification
- Work experience with firewall devices
- Strong knowledge of LAN/ WAN networks
- Antivirus protection management skills
- Team working skills
- Strong Troubleshooting skills

The executor should have the following qualifications certificates Կատարողը պարտադիր պետք է ունենա հետևյալ որակավորումն հաստատող սերտիֆիկատները 1.Windows Server 2012 Certification MCSA or higher 2.Networks related certificates : Cisco CCNA or other equales
Ծառայության մատուցման ժամկետը փետրվար-դեկտեմբեր 2015թ.
Սկիզբը 20.02.2015 ավարտը 30.12.2015

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակ.8
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02509667
Հ/Հ՝ 16048505442500

Գլխավոր տնօրեն՝ Պ.Լորեն

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«___» _____ 2015 թ. կնքված
N *«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»*
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ թվով 14 սերվերների ծրագրային սպասարկում	. %	9%	18%	27%	36 %	45%	54%	63 %	72 %	81 %	90 %	100 %	**100 %**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փակ.8
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02509667
Հ/Հ՝ 16048505442500

Գլխավոր տնօրեն՝ Պ. Լորեն

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«___» _____ 2015 թ. կնքված
N «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

Ա ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
_____
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4

«___» ___________ 2015 թ. կնքված
N *«ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԾՁԲ-11/6-15/05»*
ծածկագրով գնման պայմանագրի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ

ք. Երևան <<____>> ____________ 20
թ.

<<Մասնակցի անվանումը>>-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ <<Պատվիրատու>>) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման <<---ԲԸԾՁԲ---/--- >> ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 <<Պատվիրատու>>-ի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման <<---ԲԸԾՁԲ---/--- >> ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և բաց ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ______ (______________________տառերով______________________) ՀՀ դրամի չափով:

1.1.2 <<Պատվիրատու>>-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում <<Պատվիրատու>>-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>-ն հանձնարարում է <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի նավանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց <<Պատվիրատուի անվանումը>>-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>
<<Մասնակցի հասցեն>>
<<Մասնակցի բանկի անվանումը>>
ՀՀ
ՀՎՀՀ

տնօրեն՝ ------------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝

(ստորագրություն)

Կ.Տ